ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԵԼԻՔ

Հոդվածի հղումը. Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Մարկոսյան Մ. (2023), Հայաստանը ժամանակակից նորարարական գործունեության համատեքստում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 1(1), էջ 65-85, DOI: 10.52174/29538114_2023.1-65
Ներկայացվել է խմբագրություն՝26.05.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝30.05.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝18.07.2023 թ.

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
«Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0002-5077-4253

ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԵՊՀ նորարարության տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
https://orcid.org/0000-0002-9685-4363

ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
«Քաղաքագիտական, իրավագիտական և տնտեսագիտական հետազոտությունների և կանխատեսումների» ՀԿ անդամ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-3608-0375

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ժամանակակից համաշխարհային տնտեսության պայմաններում առանձին երկրների, ազգային տնտեսությունների, ինչպես նաև երկրների տնտեսական միությունների դերը և կարևորությունը բնութագրվում են բազմաթիվ ցուցանիշների համակարգի միջոցով, որոնց շարքում առանձնահատուկ են նորարարությունների և նորարարական գործունեության ցուցանիշները: Այդ նպատակով հետազոտվել են նորարարությունների վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետները և մոտեցումները,

բացահայտվել են նորարարությունների բովանդակությունը և կարևորությունը պետության հզորացման ու տնտեսական աճի տեմպերի ավելացման գործում: Հեղինակները, ուսումնասիրելով նշված ոլորտի ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային ցուցանիշներն ու զարգացումները, կատարել են համապատասխան վերլուծություններ և հանգել մի շարք բացահայտումների, որոնք օգտակար կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում գիտական ու գիտատեխնիկական գործունեության արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար, ինչը մեծապես կնպաստի գործունեության այդ տեսակի մրցունակության բարձրացմանը ինչպես համաշխարհային շուկայում, այնպես էլ տարածաշրջանային զարգացման մակարդակում: Հեղինակների կարծիքով՝ թեև ՀՀ-ում զգալի աշխատանք է տարվել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում իրերի վիճակը փոփոխելու և բարելավելու նպատակով (ընդունվել են առանձին իրավական ակտեր, որոնց միջոցով փորձ է արվում բարձրացնելու գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետությունը), սակայն իրականացվող միջոցառումները համակարգված և համալիր բնույթ չունեն և հիմնականում ծառայում են ոլորտում առաջացող տեղային խնդիրների մասնակի լուծմանը:

Հիմնաբառեր. *նորարարական գործունեություն, տնտեսություն, գիտական և գիտատեխնիկական գործունեություն, հետազոտության և զարգացման ծախսեր, նորարարության համաթիվ, բարձր տեխնոլոգիաների արտահանում*

JEL: O32, O38
DOI: 10.52174/29538114_2023.1-65

Ներածություն: Համաշխարհային տնտեսության գլոբալացման և տնտեսական ինտեգրման խորացման ու ընդլայնման պայմաններում ազգային տնտեսությունները դառնում են այդ համակարգի մասնիկը: Ասվածը նշանակում է, որ ազգային տնտեսությունների և դրանց կառուցվածքի հիմքը ձևավորող տնտեսական գործունեության տեսակները պետք է բավարարեն ու ապահովեն համաշխարհային տնտեսության պահանջարկը և դրա զարգացման շարունակական շարժընթացը: Հեղինակներն ուսումնասիրել են Հայաստանի Հանրապետության նորարարական համակարգի տեղն ու դերը համաշխարհային և տարածաշրջանային նորարարական համակարգի համատեքստում: Նման մոտեցումը ենթադրում է յուրատեսակ մեթոդաբանության կիրառում, որն իմաստավորվի նորարարական համաշխարհային ամբողջ համակարգի ենթատեքստում: Սա թելադրված է այն հանգամանքով, որ Հայաստանը ավելի քան 70 տարի եղել է Խորհրդային Միության հանրապետություններից մեկը և, բնականաբար, գործել է այդ պետության կարգավորման կառուցակարգերով: Հեղինակները նպատակ են դրել բացահայտելու նախկին Խորհրդային Միության հանրապետություններում նորարարական գործունեության հաջողություններն ու անհաջողությունները՝ դրանով իսկ փորձելով ներկայացնել հետհամայնավարական ժամանակահատվածում նշված ոլորտի բարեփոխումների հաջողված կամ չհաջողված լինելու հանգամանքը:

Գրականության ակնարկ: Տնտեսական գործունեության վրա ազդեցություն ունեցող գործոնները մշտապես եղել են տնտեսագետների, տնտեսական պատմաբանների և հետազոտողների ուշադրության կենտրոնում, իսկ նորարարությունների (տեխնոլոգիաների) դերն առաջնային է համարվել տնտեսագիտական տարբեր բանավեճերի ժամանակ: Տնտեսության նորարարական

զարգացման ժամանակակից տեսությունների հիմքը դրվել է 19-րդ դարում, իսկ զարգացման յուրաքանչյուր ժամանակահատվածում այդ հարաբերություններին համապատասխանող նորարարություններ են ներդրվել:

Նորարարական համակարգերի դիտարկման ընթացքում մի շարք հարցեր են կարևորվում. 1) ինչո՞ւ են նորարարությունները կենտրոնական դիրք զբաղեցնում հասարակությունում, 2) ինչո՞ւ է «նորարարություն» հասկացությունը սովորաբար ընկալվում որպես տեխնոլոգիական նորարարություն, 3) ինչո՞ւ է նորարարությունը համարվում ներդրված՝ դրա առևտրայնացման փաստից ելնելով:

Առաջին վարկածը հիմնվում է այն գաղափարի վրա, որ նորարարությունը նորություն է՝ մարդկային ստեղծարար մտքի արդյունք, որը կարող է հանդես գալ ցանկացած տեսքով՝ ոչ միայն նյութական կամ տեխնոլոգիական: Երկրորդ վարկածն այն է, որ նորարարության՝ որպես ստեղծագործության պատմությունը երեք հասկացությունների ընկալումն է. «իմիտացիա», «գյուտ», «նորարարություն»: Արևմտյան երկրների պատմության ընթացքում իմիտացիան (նմանակում) և գյուտը հակադրվել են և գտնվել հակասության մեջ, որն իր լուծումն է ստացել 20-րդ դարում նորարարության գաղափարի ներդրման հետ, ըստ որի՝ նորարարությունը գործընթաց է, իսկ գյուտը և իմիտացիան երկու հաջորդական քայլեր են, որոնք տանում են դեպի նորարարություն: Երրորդ վարկածը վերաբերում է նորարարությանը՝ որպես անցյալի ընդհատման: Այս իմաստով, նորարարությունը դիտարկվում է որպես ժամանակակից արժեքների համախումբ, մյուս կողմից՝ դա նաև անցյալի շարունակական բաղադրիչ է[1]:

Նորարարության հայեցակարգի ավելի ճշգրիտ մեկնաբանություններ և սահմանումներ տրվել են, մասնավորապես, Փ. Դրակերի կողմից. «Նորարարությունը հատուկ աշխատանքային գործիքակազմ է, որի միջոցով փոփոխությունները օգտագործվում են որպես հնարավորություն՝ նոր բիզնես կամ ծառայություն սկսելու համար»: Ըստ Կ. Նայտի՝ «Նորարարությունը որևէ կազմակերպությունում փոփոխությունների կիրառումն է կամ դրա միջավայրում որևիցե նորույթի ներդրումը»: Նորարարության ամենահստակ բնորոշումներից մեկը, որն ամփոփում է բազմաթիվ այլ տեսակետներ, կարելի է համարել հունգարացի տնտեսագետ Բ. Սանտոյի սահմանումը, ըստ որի՝ նորարարությունը սահմանվում է որպես սոցիալական, տեխնիկական և տնտեսական գործընթաց, որը գաղափարների և գյուտերի գործնական օգտագործման միջոցով հանգեցնում է իրենց հատկություններով լավագույն ապրանքների կամ տեխնոլոգիաների ստեղծմանը, և եթե նորարարությունը կենտրոնացած է տնտեսական շահույթի վրա, ապա դրա հայտնվելը շուկայում կարող է լրացուցիչ առաջընթաց ապահովել: Նորարարությունը, որպես արտադրության արդյունավետ զարգացման գործոն, կարող է ձևավորել մի շարք պայմանների և հանգամանքների համադրություն: Այս տեսակետը, ըստ էության, համահունչ է Պ. Դրակերի տեսակետին, որը, ինչպես նշվեց, նորարարությունը համարում է ոչ միայն նպատակ, այլև միջոց և բիզնեսի զարգացման գործիք[2]:

---

[1] Տե՛ս **Benoît Godin**, Innovation: The History of a Category, Project on the Intellectual History of Innovation, Working Paper No. 1, Montréal, 2008, էջ 5-9:

[2] Տե՛ս **Воронов Н.А.,** Исследование терминологически-классификационного аспекта информационной деятельности, Вестник ННГУ, №1, 2005, էջ 285-287:

Կարող ենք փաստել՝ առաջին անգամ գիտական համատեքստում «նորարարություն» հասկացությունը կիրառվեց ավստրիական ծագում ունեցող ամերիկացի գիտնական Յո. Շումպետերի կողմից՝ իր «Տնտեսական զարգացման տեսություն. կապիտալիզմ, սոցիալիզմ և ժողովրդավարություն» աշխատության մեջ: Նա նորարարությունը սահմանում է որպես «նոր համակցությունների իրականացում», որոնք իրենց հերթին նախատեսում են հետևյալ հինգ դեպքերը. 1) նոր՝ սպառողին դեռևս անհայտ բարիքի կամ այդ բարիքի նոր որակի, հատկանիշի ստեղծում, 2) արտադրության որոշակի ոլորտում արտադրության նոր մեթոդի ներդրում, որի հիմքում պարտադիր չէ, որ դրված լինի գիտական հայտնագործությունը. նորարարությունը կարող է որոշակի ապրանքի առևտրային օգտագործման նոր ձևի մեջ լինել, 3) սպառման նոր շուկայի յուրացում, 4) հումքի և կիսաֆաբրիկատների նոր աղբյուրի ստացում, 5) համապատասխան վերակազմակերպում, որի արդյունքում, օրինակ, ապահովվում է մենաշնորհային դիրք կամ վերացվում է այլ կազմակերպության մենաշնորհային դիրքը[3]: Կարող ենք եզրակացնել, որ Յո. Շումպետերը նորարարությունը, առաջին հերթին, համարում է առկա ռեսուրսների և բարիքների օգտագործում:

Դեռևս 20-րդ դարի սկզբին գոյություն ունեին նորարարական գործունեության այլ հասկացություններ, որոնք հաճախ այլընտրանքային տարբերակ էին Յո. Շումպետերի տեսության հիմնական դրույթներին: Այդ հասկացությունների հեղինակներից մեկը Ն. Կոնդրատևն էր, ով 1920-ականներին առաջարկեց դինամիկ գործընթացները դասակարգել որպես էվոլյուցիոն (անշրջելի) և ալիքաձև (հետադարձելի): Էվոլյուցիոն գործընթացները, ըստ Ն. Կոնդրատևի, պայմանավորված են այնպիսի փոփոխություններով, որոնց վրա չեն ազդում «պերտուրբացիոն» (բնականոն ընթացքի կտրուկ փոփոխություններ) գործոնները: Ալիքային գործընթացների ուսումնասիրության համատեքստում Ն. Կոնդրատևն առաջարկեց մոտ 50 տարի տևողությամբ «մեծ ցիկլերի» (Կոնդրատևի երկար ալիքները) առկայություն՝ կարևորելով դրանց կապը արտադրության և տեխնոլոգիաների զարգացման հետ: Նա հավատում էր, որ այդ ալիքների առաջացման և պարամետրերի վրա հիմնականում ազդում են արտաքին (էկզոգեն) գործոնները՝ տեխնոլոգիաների փոփոխությունները, պատերազմները, հեղափոխությունները, «նոր խաղացող» երկրների տնտեսական ասպարեզում հայտնվելը, ոսկու գների դինամիկան և այլն[4]:

Մասնագիտական գրականության տարբեր աղբյուրներում կա մոտեցում, ըստ որի նորարարությունը դիտարկվում է որպես գործընթաց: Օրինակ՝ Բ. Թվիսի կարծիքով «նորարարությունը գործընթաց է, որի ընթացքում գյուտը կամ գաղափարը ձեռք է բերում տնտեսական բովանդակություն»[5]:

Նորարարությունն ինքնին շատ լայն հասկացություն է, որը կարելի է տարբեր կերպ հասկանալ: Առավել ամբողջական սահմանումներից մեկը առաջարկել են Ս. Մայերսը և Դ. Մարկիզը՝ նշելով, որ նորարարությունը ոչ թե

---

[3] Տե՛ս **Шумпетер Й.А.,** Теория экономического развития. Капитализм, социализм и демократия, перевод с немецкого. М., «Эксмо», 2008, էջ 132-133:

[4] Տե՛ս **Яголковский С.Р.,** Психология инноваций, Издательский дом Высшей школы экономики. М., 2011, էջ 16-17:

[5] Տե՛ս https://psyforums.ru/hy/vnedrenie-fgos/ponyatie-anomiya-bylo-vvedeno-v-nauchnyi-oborot-vnimanie-eto.html

առանձին գործողություն է, այլ փոխկապակցված ենթածրագրերի ամբողջական գործընթաց: Դա միայն նոր գաղափարի ընկալում կամ նոր սարքավորման գյուտ չէ, ոչ էլ նոր շուկայի զարգացում: Դա նշվածների իրականացման գործընթացն է՝ համապարփակ ձևով: Շատ հեղինակներ, ներառյալ վերը նշվածները, տարբերակում են նորարարությունը գյուտից՝ ենթադրելով, որ նորարարությունը կապված է գաղափարների կամ գյուտերի առևտրային և գործնական կիրառման հետ: Այսպիսով՝ գյուտը գաղափարի հասկացություն է, մինչդեռ նորարարությունը գյուտի հետագա արտացոլումն է տնտեսության մեջ[6]:

Նորարարության մեջ իրենց կարևոր դերն ունեն գիտությունն ու տեխնոլոգիաները: Ակնհայտ է, որ գիտության և տեխնոլոգիաների միջև կան զգալի տարբերություններ: Գիտությունը կարելի է սահմանել որպես համակարգված գիտելիքների ամբողջություն, մինչդեռ տեխնոլոգիան գիտության կիրառումն է: Այս գաղափարն ամփոփելով՝ կարելի է ստանալ հետևյալ սահմանումը. տեխնոլոգիան այն գիտելիքն է, որը կիրառվում է ապրանքների կամ արտադրական գործընթացների նկատմամբ: Այսպիսով՝ տեխնոլոգիան կարող է սահմանվել տարբեր կերպ: Սահմանումների այս շրջանակը ցույց է տալիս, որ տեխնոլոգիայի վերաբերյալ շատ տարբեր տեսակետներ կան: Ըստ սահմանումներից մեկի՝ այն դիտարկվում է որպես գործընթաց, որն օգտագործվում է մուտքային ռեսուրսները արդյունքների վերածելու համար, կամ կարող է սահմանվել որպես գիտելիքների կիրառում՝ աշխատանքն իրականացնելու համար: Մեկ այլ սահմանման համաձայն՝ տեխնոլոգիան տեսական և գործնական գիտելիքների ու հմտությունների համակցություն է, որը կարող է օգտագործվել արտադրանքի մշակման համար: Չնայած տեխնոլոգիայի սահմանումների մեծ բազմազանությանը, դրանցից յուրաքանչյուրում կան նաև որոշ ընդհանուր տարրեր: Ըստ յուրաքանչյուր սահմանման՝ տեխնոլոգիան ներառում է գործընթաց, որի փոփոխությունները տեխնոլոգիայի արդյունք են, և որ տեխնոլոգիան ենթադրում է համակարգված մոտեցում՝ ցանկալի արդյունքի հասնելու համար (բարելավումներ, նպատակներ և վերջնական արդյունքներ): Մենք համատեղում ենք այս տարբեր սահմանումները՝ տեխնոլոգիան սահմանելու համար, և դիտարկում ենք որպես անհատների և կազմակերպությունների կողմից ուսուցման և գիտելիքների գործնական իրացում՝ մարդկային ջանքերը խթանելու նպատակով: Տեխնոլոգիան գիտելիքների, ապրանքների, գործընթացների, գործիքների և համակարգերի համակցություն է, որն օգտագործվում է ապրանքներ ստեղծելու կամ ծառայություններ մատուցելու համար: Տեխնոլոգիայի սահմանումը ենթադրում է նաև գործընթաց, որն էլ, իր հերթին, ներառում է ռազմավարական կառավարման տարրեր: Հետևաբար՝ տեխնոլոգիայի կառավարման սահմանումը պետք է արտացոլի ռազմավարական մոտեցումը: Այս մոտեցումը պահանջում է տարբեր առարկաների ինտեգրում տեխնոլոգիայի կառավարման մեջ, օրինակ՝ որոշումների կայացման գործընթացը, կառավարիչների փորձը, խմբի ու թիմի վարքը և այլն: Տեխնոլոգիայի կառավարման առավել հաճախ մեջբերված

---

[6] Տե՛ս **Trott P.,** Innovation management and new product development,6th edition Edinburgh, 2017, էջ 15-18:

սահմանումներից մեկը հետևյալն է. տեխնոլոգիայի կառավարումը ինժեներ-ական, գիտական և կառավարման առարկաների միավորում է՝ կազմակեր-պության ռազմավարական և գործառնական նպատակների ձևավորման և իրականացման, տեխնոլոգիական հնարավորությունների պլանավորման, մշակման և իրականացման համար[7]: Է. Մ. Ռոջերսը 1962 թ. առաջարկեց նոր-արարությունների տարածման տեսությունը (Diffusion of innovation), որը լա-վագույն մոդելներից մեկն է տեխնոլոգիական և սոցիալական գիտություններ-ում: Այն ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են հոգեբանական կամ անհատականության առանձնահատկությունների ազդեցությունը, տեխնոլո-գիայի ընկալումները, հաղորդակցման վարքագիծը և սոցիալ-ժողովրդագրա-կան հատկանիշները: Է. Ռոջերսի աշխատանքն ի սկզբանե իրականացվել է զարգացող երկրներում, որտեղ նա ուսումնասիրել է նոր գաղափարների տա-րածումը հասարակությունում: Հետագայում նա զարգացրեց իր ուսումնասի-րությունը, որն ընդգրկեց շուկայում նոր արտադրանքի նորարարությունները, և կարողացավ պատկերել սպառողների տարբեր կատեգորիաներ[8]:

Հետազոտության մեթոդաբանություն: Ուսումնասիրությունում կիրառվել են գիտական վերացարկումների, վիճակագրական խմբավորումների, ըստ առան-ձին երկրների վիճակագրական վերլուծությունների, միջերկրային համա-դրումների, ինչպես նաև երկրների առանձին խմբերի համադրությունների և ոլորտի վերաբերյալ համաթվերի ու դրանց վարկանշման մոտեցումները և սկզբունքները: Այդ նպատակով քննարկվել են 2020 թ. դրությամբ նախկին Խորհրդային Միության երկրների հետազոտության և զարգացման ծախսերը (ՀՆԱ-ի նկատմամբ, %), դրանց զբաղեցրած տեղը 2011–2020 թթ., ապա եր-կայացվել է 2022 թ. դրությամբ նորարարության համաթվի արժեքով և զբա-ղեցրած տեղով նախկին Խորհրդային Միության երկրների ցանկը: Դիտարկե-լով նախկին Խորհրդային Միության երկրներում բարձր տեխնոլոգիաների զարգացման հիմնախնդիրները՝ ուսումնասիրվել են 2021 թ. դրությամբ բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքները տարբեր հանրապետությունն-երում և զբաղեցրած տեղը 2011-2021 թթ. այդ երկրների խմբում: Կարևորվել է 2020 թ. դրությամբ նախկին Խորհրդային Միության երկրների տեղեկա-տվական տեխնոլոգիաների արտահանումը, տոկոսը՝ ապրանքների արտա-հանման ընդհանուր ծավալում և զբաղեցրած տեղը 2011–2020 թթ.: Հայաս-տանի Հանրապետության նորարարությունների ներկայացման և գնահատ-ման նպատակով ուսումնասիրվել և վերլուծվել են նորարարությունների զար-գացման հիմնական ցուցանիշները համաշխարհային նորարարությունների ցուցանիշների համատեքստում 2011-2021 թթ. ընթացքում: Ներկայացվել են Հայաստանի Հանրապետության նորարարությունների համաթվի արժեքները (0-100), հետազոտության և մշակման ծախսերը (%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ), տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանումը ապրանքների արտա-հանման ընդհանուր ծավալում (%), բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքները, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների արտահանումը՝ մշակող

---

[7] Տե՛ս **White Margarett A., Bruton Garry D.,** The management of technology and innovation, 2007, էջ 15-17:

[8] Տե՛ս **Trott P.,** նշվ. աշխ., էջ 99:

արդյունաբերության ապրանքների արժեքի նկատմամբ (%): Հարավային Կովկասի երկրների ցուցանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ նորարարության համաթիվը և զբաղեցրած տեղը ցույց են տալիս, որ առաջատարը Վրաստանն է՝ 27.9 արժեքով, այնուհետև Հայաստանը՝ 26.6 արժեքով, ապա Ադրբեջանը՝ 21.4 արժեքով: Նկատելի է, որ Հայաստանը 2012 թ., նախկին Խորհրդային Միության երկրների ցանկում, նշված ցուցանիշով զբաղեցրել է 7-րդ տեղը, իսկ հաջորդ տարիներին ցուցանիշի անկում է արձանագրվել. 2022 թ. զբաղեցրել է 9-րդ տեղը:

Վերլուծություն: Համաշխարհային տնտեսության և տնտեսական ինտեգրման պայմաններում առաջ եկած սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային նոր հանգամանքները սկզբունքորեն նոր պահանջներ են ներկայացնում ազգային տնտեսությունների կողմից թողարկվող այս կամ այն ապրանքի և ծառայությունների իրացման խնդրի վերաբերյալ: Բանն այն է, որ որևէ երկրում տնտեսական գործունեության այս կամ այն տեսակը չպետք է գնահատվի և քննարկվի միայն «ազգային տնտեսության նեղ պատուհանից», քանի որ նման տեսակետը կարող է ամենևին էլ ճիշտ պատկերացում չտալ երկրում տվյալ ապրանքի, ծառայության կամ աշխատանքի շարժի և այդ գործընթացից ակնկալվող արդյունքների մասին: Օրինակ՝ եթե ազգային տնտեսության որևէ բնագավառում իրականացվող ծախսերն ավելացել են, ենթադրենք՝ 20%-ով, որը նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ կարող է մի քանի անգամ ավելի լինել, այնուամենայնիվ, սա բավարար չի կարող համարվել, քանի դեռ չի համեմատվել մրցակից պետությունների արտադրանքի կամ ծառայության համանման ոլորտի ծախսերի հետ: Այս սկզբունքը գործնականում կիրառելի է համաշխարհային շուկայում իրացվող ցանկացած ապրանքի կամ մատուցվող ծառայության պարագայում: Այլ կերպ ասած՝ համաշխարհային շուկա ապրանք արտահանելիս կամ ծառայություն մատուցելիս ոչ միայն պետք է օգտվել ազգային արտադրողի կամ տնտեսության բացարձակ և հարաբերական առավելություններից[9], այլև անհրաժեշտ է համեմատել տվյալ արտադրանքի կամ մատուցվող ծառայության մի շարք պարամետրեր, որոնք համաշխարհային շուկայում էական ազդեցություն են թողնում դրա իրացման պայմանների և հանգամանքների վրա:

Նշվածն ավելի քան կարևոր և նշանակալից է դառնում փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների համար, որոնք համաշխարհային շուկա մուտք գործելիս ունեն որոշակի դժվարություններ և սահմանափակում են տվյալ արտադրանքի կամ մատուցվող ծառայության իրացման հնարավորությունները: Որպես այդպիսի գործոններ կարող են հանդես գալ ազգային տնտեսության փոքր չափերը, բնակչության ցածր գնողունակությունը, իրացման շուկաներից մեծ հեռավորությունը, դեպի ծով ելք չունենալու հանգամանքը և այլն: Էական ազդեցություն ունեն նաև ազգային տնտեսության կառուցվածքը և մրցունակությունը: Կարևոր հանգամանք է դառնում նաև երկրի վճարային հաշվեկշռի բացասական մեծությունը: Դժվար չէ նկատել, որ նշված հանգամանքներն առկա են Հայաստանի Հանրապետությունում, ինչն էլ նշա-

[9] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս, **Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ.,** Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՃՇՊՀ, 2011, էջ 46:

նակում է, որ անհրաժեշտ է մանրակրկիտ և յուրահատուկ մոտեցում ցուցաբերել տնտեսության այն ոլորտներին և բնագավառներին, որոնք զգալի ազդեցություն են ունենում ՀՆԱ աճի տեմպերի ավելացման և բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման առումներով: Հայաստանի Հանրապետության տնտեսության համար այդպիսի տնտեսական գործունեության տեսակ կարող է լինել գիտական և գիտատեխնիկական գործունեությունը: Վերջինով է հիմնականում պայմանավորված ազգային տնտեսության ապրանքների և ծառայությունների արտահանումն ու ներմուծումը, հատկապես արտահանման որակը (նկատի ունենք բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման որակը), նորամուծությունների ծավալն ու դրանց ճանաչումը համաշխարհային շուկայում և մի շարք այլ ցուցանիշներ, որոնք բնութագրում են գիտական ու գիտատեխնիկական գործունեության զարգացման աստիճանը և իրականացման արդյունավետությունը համապատասխան ցուցանիշների համաշխարհայնացման համայնապատկերում:

Հետազոտության արդյունքները: Նորանկախ Հայաստանի Հանրապետության կառավարությունների կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը էական ուշադրություն է հատկացվել, որը դեռևս չի հանգեցրել ցանկալի արդյունքների և հետազոտությունների արդյունավետության բարձրացման: Չանդրադառնալով նշվածի մանրամասներին՝ նկատենք, որ ներկայումս ՀՀ-ում գործում է որոշակի գիտական և գիտակրթական համակարգ[10], որն ունի զարգացման որոշակի հնարավորություններ և, բնականաբար, նաև բազմաթիվ հիմնախնդիրներ: Ստեղծված հանրակրթական համակարգը ձևավորվել է տասնամյակների ընթացքում, որի գործունեության համար մշակվել և ընդունվել են բազմաթիվ օրենքներ և այլ իրավական ակտեր, որոնք այս կամ այն ձևով կարգավորում են ոլորտը[11]: Նշված իրավական ակտերի քննական վերլուծությունը և դրանց բարեփոխումները ինչպես օրենսդրաիրավական, այնպես էլ կազմակերպական-կառուցվածքային փոփոխությունների առումով, դուրս են սույն ուսումնասիրության շրջանակից. այդ հիմնախնդիրներին կանդրադառնանք առանձին հետազոտությամբ:

Հարկ է նկատել, որ հատկապես վերջին 3–4 տարիների ընթացքում էականորեն փոխվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության նկատմամբ պետական համակարգի վերաբերմունքը: Բավական է նշել, որ զգալիորեն ավելացել են պետական բյուջեից տվյալ գործունեության համար կատարվող ծախսերը (աղյուսակ 1):

---

[10] Տե՛ս, օրինակ, **Սուվարյան Յու. Մ., Հարությունյան Վ. Լ., Սարգսյան Վ. Ա., Խաչատրյան Վ. Վ.,** Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 232 էջ:

[11] «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՕ-119, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մի շարք օրենքներ, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2011 թվականի ապրիլի 14-ին, ՀՕ-135-Ն, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, ՀՕ-62-Ն:

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների, ծրագրերի համար կատարած ծախսերը 2021–2022 թթ., հազ. դրամ[12]

Համար	Ծրագիր	2021	Համար	Ծրագիր	2022
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	14,677,983.6	1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	21,697,949.3
1162-11002	Գիտական ենթակառուցվածքի արդիականացում	8,051,262.8	1162-11002	Գիտական ենթակառուցվածքի արդիականացում	12,457,250.8
1162-11004	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	1,049,784.8	1162-11004	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	1,127,275.6
1162-11005	Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	3,422,177.0	1162-11005	Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	5,781,524.0
1162-11006	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	131,535.6	1162-11006	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	135,960.0
1162-11008	Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	688,995.3	1162-11008	Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	767,320.8
1162-11009	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	203,966.5	1162-11009	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	217,511.4
1162-11012	Գիտական գրադարանային ծառայություններ	124,855.3	1162-11012	Գիտական գրադարանային ծառայություններ	127,721.1
1162-11013	Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ	163,331.0	1162-11013	Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ	165,156.2
1162-12001	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	699,075.4	1162-12001	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	775,229.4
1162-32001	ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում	143,000.0	1162-32001	ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում	143,000.0

Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ 2022 թ., 2021 թ. համեմատությամբ, «գիտական և գիտատեխնիկական գործունեության ծախսերը» ավելացել են 1,4 անգամ, ինչը էական ներդրում է ոլորտի զարգացման գործում: Ավելին՝ 2023 թ. մարտի 30-ին ՀՀ Կառավարության նիստում «Գիտական և

[12] Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների:

գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում և մի շարք հարակից օրենքներում փոփոխությունների ու լրացումների նախագծերի քննարկման ժամանակ ՀՀ ԿԳՄՍ նախարարն ամրագրեց գիտության և բարձրագույն կրթության համակարգերի որակական և շեշտակի զարգացման առաջնահերթությունը և ներկայացրեց այդ ուղղությամբ կատարված մեծածավալ աշխատանքները: Միայն գիտության ֆինանսավորման ուղղությամբ Կառավարությունը 2018 թ. համեմատությամբ 2023 թ. ոլորտի ֆինանսավորումը ավելացրել է 21,74 մլրդ ՀՀ դրամով՝ հասցնելով 36 մլրդ ՀՀ դրամի, ինչը շուրջ 2,5 անգամ ավելի է, քան 2018 թ. գիտության ոլորտին տրամադրված ֆինանսավորումը[13]: Սակայն հարց է առաջանում՝ արդյո՞ք ֆինանսավորման ավելացումը էական փոփոխությունների է հանգեցրել ոլորտի արդյունավետության բարձրացման առումով:

Նախագծերով առաջարկվող կարգավորումների բնույթը գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի իրավահարաբերությունների բարելավումն է և արդիականացումը, որի ուղղությամբ նախատեսվում է՝

- պետական կառավարման համակարգում ունենալ պետական կառավարման նոր մարմին՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե,
- հստակեցնել օրենքում կիրառվող մի շարք հասկացություններ,
- ժամանակակից հասկացությունների, ինչպես նաև օրենքով սահմանված գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության նպատակների ու սկզբունքների իրագործմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ընդունման համար ՀՀ Կառավարության իրավասությանը վերապահել լիազորող նորմերի ներմուծումը,
- կանոնակարգել գիտական աշխատողի աշխատանքի վարձատրության, գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարի տրամադրման, գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման, գիտական դրամաշնորհային ֆինանսավորման հետ կապված հարցերը[14]:

Բացի վերը նշվածից՝ ՀՀ Կառավարության կողմից 2021 թ. մայիսի 13-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշումը, որով ամրագրվել է. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման գծով պետական ծրագրերում ներգրավված գիտական կադրերի պաշտոնային դրույքաչափի նվազագույն չափի հաշվարկի համար, որպես բազային աշխատավարձ, 2022 թվականի հունվարի 1-ից սահմանել 66140 դրամ: Յուրաքանչյուր տարակարգի պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի

---

[13] Տե՛ս ՀՀ Կառավարության 2023 թ. մարտի 30-ի նիստի հեռարձակումը https://www.youtube.com/watch?v=ujX51fL4J9s հղմամբ:

[14] Տե՛ս ՀՀ Կառավարության 2023 թ. մարտի 30-ի նիստի օրակարգը, https://www.e-gov.am /sessions/

նորմալ տևողությամբ աշխատողների համար, հաշվարկվում է որոշման հավելվածով նախատեսված աղյուսակով՝ տվյալ տարվա համար սահմանված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով: Այդ գործակիցները 2022–2025 թթ. ընթացքում տարեցտարի ավելանում են[15]: Սակայն նորից առաջանում է նույն հարցը. արդյո՞ք կատարվածը կապահովի հայկական գիտական և գիտատեխնիկական մտքի զարգացումը՝ հասցնելով այն միջազգային լավագույն ցուցանիշների:

Մեկ այլ փաստաթղթում՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծում (որը դրվել է հանրային քննարկման) նշված է. «Տնտեսական քաղաքականության հենքը տեխնոլոգիական առաջընթացն է, ինչի իրագործումը պայմանավորված է մարդկային կապիտալի զարգացմամբ և գիտելիքահենք տնտեսության ստեղծմամբ: Պետության հիմնական նպատակներից է Հայաստանում մարդկային կապիտալի զարգացումը և մարդկային տաղանդի դրսևորման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը»: Նշված հայեցակարգով նախատեսվում է նաև, որ նախանշված գերակայությունների համատեքստում պետք է ընդունվեն, վերախմբագրվեն կամ վերաշարադրվեն գործող և հաջորդող տարիների համար մշակվող ոլորտային հայեցակարգերն ու ռազմավարությունները: Մինչդեռ, որպես հայեցակարգի ընդունման նպատակ, դիտարկվել է միայն Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման քաղաքականության գերակայությունների սահմանումը, սակայն չկան հստակ հանձնարարականներ նախկինում ընդունված փաստաթղթերի բարելավման վերաբերյալ:

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեությանն առնչվող հիմնական ցու-ցանիշների համադրումը միջազգային, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության երկրների համապատասխան ցուցանիշների հետ: Աշխարհի լավագույն երկրների տասնյակում առաջին տեղը զբաղեցնում է Իսրայելը՝ հետազոտության և մշակման ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշով (%), ընդ որում, ցուցանիշը տատանվել է՝ 4%-ից (2011 թ.) հասնելով 5.44%-ի (2020 թ.): Երկրորդ տեղը զբաղեցնող Հարավային Կորեան 2011 թ. 3.59% ցուցանիշով 3-րդ տեղում էր, իսկ 2020 թ. 4.81% ցուցանիշով զբաղեցրել է 2-րդ տեղը: Երրորդ տեղում Շվեդիան է՝ 3.53%, չորրորդ տեղում Բելգիան՝ 3.48%: ԱՄՆ-ն այս երկրների շարքում զբաղեցնում է հինգերորդ տեղը՝ 3.45% ցուցանիշով: Հարկ է նշել, որ հետազոտություն և մշակման ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությամբ լավագույն 10 երկրների ցանկում գերտերություն միայն ԱՄՆ-ն է, իսկ մնացածը փոքր և միջին չափի երկրներ են ինչպես իրենց տարածքով, այնպես էլ բնակչության թվով[16]:

Նախկին Խորհրդային Միության երկրներից հետազոտության ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ (%) 2020 թ. ցուցանիշով առաջին տեղում Էստոնիան է: Հատկանշական է, որ այս ցուցանիշով Էստոնիան 2011–2020 թթ. գլխավորել է աղյուսակը (աղյուսակ 2): 2020 թ. 2-րդ տեղում Լիտվան էր (1.16%), իսկ 3-րդ տեղում՝ Ռուսաստանը (1.1%): Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի

[15] Տե՛ս ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշումը:

[16] Վերլուծությունը կատարվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

երկրների ցուցանիշներին, ապա առաջատարը Վրաստանն է՝ 0.3%, այնուհետև Ադրբեջանը՝ 0.22%, ապա Հայաստանը՝ 0.21%: Նկատելի է, որ Հայաստանը 2012 թ., նախկին Խորհրդային Միության երկրների շարքում, նշված ցուցանիշով զբաղեցրել է 8-րդ տեղը, հաջորդ տարիներին իրավիճակը վատացել է. 2020 թ. 0.21% ցուցանիշով զբաղեցրել է 10-րդ տեղը:

Աղյուսակ 2

2020 թ. դրությամբ նախկին Խորհրդային Միության երկրների հետազոտության և մշակման ծախսերը (ՀՆԱ-ի նկատմամբ, %) և զբաղեցրած տեղը 2011–2020 թթ.[17]

	2020	2019	2018	2017	2015	2011
Երկիրը	Հետազոտության և մշակման ծախսերը (ՀՆԱ-ի նկատմամբ, %) - զբաղեցրած տեղը					
Էստոնիա	1.79-1	1.63-1	1.42-1	1.28-1	1.47-1	2.31-1
Լիտվա	1.16-2	0.99-3	0.94-3	0.9-3	1.04-3	0.9-3
Ռուսաստան	1.1-3	1.04-2	0.99-2	1.11-3	1.1-2	1.02-2
Լատվիա	0.71-4	0.64-4	0.64-4	0.51-5	0.62-4	0.72-4
Բելառուս	0.55-5	0.58-5	0.6-5	0.58-4	0.5-6	0.68-6
Ուկրաինա	0.41-6	0.43-6	0.47-6	0.45-6	0.61-5	0.71-5
Վրաստան	0.3-7	0.28-7	0.28-7	0.27-7	0.3-8	տ. չ.
Մոլդովա	0.23-8	0.24-8	0.25-8	0.25-8	0.31-7	0.34-7
Ադրբեջան	0.22-9	0.2-9	0.18-10	0.18-10	0.22-10	0.21-9
Հայաստան	0.21-10	0.18-10	0.19-9	0.23-9	0.25-9	0.27-8
Ուզբեկստան	0.14-11	0.11-12	0.12-12	0.15-11	0.16-12	0.15-12
Ղազախստան	0.13-12	0.12-11	0.12-11	0.13-12	0.17-11	0.15-11
Ղրղզստան	0.09-13	0.09-13	0.1-13	0.11-13	0.12-13	0.16-10
Տաջիկստան	0.09-14	0.09-14	0.09-14	0.11-14	0.1-14	0.12-13
Թուրքմենստան18	-	-	-	-	-	-

Միջազգային պրակտիկայում նորարարական գործունեության միջերկրային համեմատությունների կարևոր բնութագրերից են նորարարության համաթվի արժեքը և զբաղեցրած տեղը աշխարհի երկրների շարքում:

2022 թ. նորարարության համաթվի արժեքով և զբաղեցրած տեղով աշխարհում լավագույն երկիր է ճանաչվել Շվեյցարիան՝ 64.6 արժեքով: Նկատենք, որ աղյուսակ 3-ում բերված բոլոր տարիներին Շվեյցարիան զբաղեցրել է 1-ին տեղը: 2022 թ. 2-րդ տեղում ԱՄՆ-ն է՝ 61.8 արժեքով, 2011 թ. զբաղեցրել է 5-րդ տեղը՝ 60.1 արժեքով: 2022 թ. 3-րդ տեղը զբաղեցրել է Շվեդիան՝ 61.6 արժեքով, իսկ 2011 թ. այս երկիրը զբաղեցրել է 2-րդ տեղը՝ 62.4 արժեքով[19]:

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ 2022 թ. նախկին Խորհրդային Միության երկրների շարքում նորարարության համաթվի արժեքով (0-100) և զբաղեցրած տեղով առաջատարը Էստոնիան է՝ 50.2, ընդ որում, այս երկիրը գլխավորում է աղյուսակը 2011 թ. ի վեր: 2022 թ. տվյալներով 2-րդ տեղում Լիտվան է՝ 37.4 արժեքով, որը 2011 թ. տվյալներով 4-րդ տեղում էր՝ 38.5: 3-րդ տեղում 2022 թ. տվյալներով Լատվիան է՝ 36.5, իսկ 2011 թ. զբաղեցրել է 2-րդ տեղը՝ 39.8 արժեքով: Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի երկրներին, ապա առաջատարը Վրաստանն է՝ 27.9, այնուհետև Հայաստանը՝ 26.6, ապա Ադրբեջանը՝ 21.4: Նկատելի է, որ Հայաստանը 2012 թ., նախկին Խորհրդային

[17] Կազմվել և հաշվարկվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[18] Թուրքմենստանի տվյալները բացակայում են:
[19] Վերլուծությունը կատարվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

Միության երկրների շարքում, նշված ցուցանիշով զբաղեցրել է 7-րդ տեղը, իսկ հաջորդ տարիներին դիրքի անկում է արձանագրվել. 2021–2022 թթ. զբաղեցնել է 9-րդ տեղը:

Աղյուսակ 3

2022 թ. դրությամբ նորարարության համաթվի արժեքով (0-100) և զբաղեցրած տեղով նախկին Խորհրդային Միության երկրների ցանկը[20]

Երկիրը	2022	2021	2020	2019	2018	2017	2015	2011
	Նորարարության համաթվի արժեքը (0-100) - նորարարության համաթվի տեղը նորարարության համաշխարհային համաթվի շարքում							
Էստոնիա	50.2-1	49.9-1	48.3-1	50-1	50.5-1	50.9-1	52.8-1	49.2-1
Լիտվա	37.4-2	39.9-3	39.2-3	41.5-3	տ.չ.	41.2-3	42.3-3	38.5-4
Լատվիա	36.5-3	40-2	41.1-2	43.2-2	43.2-2	44.6-2	45.5-2	39.8-2
Ռուսաստան	34.3-4	36.6-4	35.6-5	37.6-4	37.9-4	38.8-4	39.3-5	35.9-5
Մոլդովա	31.1-5	32.3-8	33-6	35.5-7	37.6-5	36.8-6	40.5-4	38.7-3
Ուկրաինա	31-6	35.6-5	36.3-4	37.4-5	38.5-3	37.6-5	36.5-8	35-6
Վրաստան	27.9-7	32.4-7	31.8-8	37-6	35-6	34.4-8	33.8-9	31.9-8
Բելառուս	27.5-8	32.6-6	31.3-9	32.1-9	29.4-10	30-11	38.2-6	տ.չ.
Հայաստան	26.6-9	31.4-9	32.6-7	34-8	32.8-7	35.7-7	37.3-7	33-7
Ուզբեկստան	25.3-10	27.4-12	24.5-13	տ.չ.	տ.չ.	տ.չ.	25.9-14	տ.չ.
Ղազախստան	24.7-11	28.6-10	28.6-10	31-10	31.4-8	31.5-9	31.2-10	30.3-9
Ադրբեջան	21.4-12	28.4-11	27.2-11	30.2-11	30.2-9	30.6-10	30.1-11	29.2-11
Ղրղզստան	21.1-13	24.5-13	24.5-12	28.4-12	27.6-11	28-13	28-12	29.8-10
Տաջիկստան	18.8-14	23.9-14	22.2-14	26.4-13	26.5-12	28.2-12	27.5-13	24.5-12
Թուրքմենստան[21]	-	-	-	-	-	-	-	-

Աղյուսակ 4

2021 թ. դրությամբ նախկին Խորհրդային Միության երկրները բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքով և զբաղեցրած տեղով 2011–2021 թթ., մլն ԱՄՆ դոլար[22]

Երկիրը	2021	2020	2019	2018	2017	2015	2011
	Բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքը (մլն ԱՄՆ դոլար) - բարձր տեխնոլոգիաների արտահանման տեղը						
Ռուսաստան	10553.18-1	6524.88-1	10756.54-1	10075.33-1	10359.16-1	11449.52-1	5731.65-1
Լիտվա	3106.96-2	2619.11-2	2526.91-2	2515.95-2	2317.43-2	1919.84-4	1582.03-5
Էստոնիա	2680.43-3	2169.21-4	1734.95-4	1907.6-3	1843.54-3	2052.94-3	2547.55-3
Լատվիա	1944.25-4	1837.83-5	1469.86-5	1879.35-4	1413.24-5	1291.46-6	633.82-6
Ուկրաինա	1283.59-5	1175.95-6	1165.83-6	1213.06-6	1213.57-6	1494.82-5	1932.26-4
Բելառուս	856.74-6	801.65-7	756.85-7	716.8-7	687.6-7	577.13-7	514.19-7
Ղրղզստան	84.09-7	27.64-10	29.75-9	40.02-8	88.91-8	43.74-8	11.89-10
Հայաստան	37.56-8	26.51-11	45.57-8	36.29-9	28.24-11	11.86-12	7.45-12
Ադրբեջան	22.21-9	33.91-9	28-10	21.18-11	14.07-14	13.93-11	10.33-11
Մոլդովա	21.77-10	18.9-12	24.95-11	18.85-12	30.06-10	20.72-10	19.85-8
Վրաստան	16.89-11	14.03-13	19.34-13	25.12-10	21.23-13	34.24-9	12.15-9
Ուզբեկստան	15.07-12	42.22-8	20.47-12	12.13-13	39.35-9	տ. չ.	տ. չ.
Ղազախստան	տ. չ.	2492.25-3	2247.38-3	1762.27-5	1785.38-4	2855.23-2	2599.14-2
Տաջիկստան	տ. չ.	1.55-14	7.87-14	7.13-14	23.66-12	տ. չ.	տ. չ.
Թուրքմեն-ստան[23]	-	-	-	-	-	-	-

[20] Կազմվել և հաշվարկվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[21] Թուրքմենստանի տվյալները բացակայում են:
[22] Կազմվել և հաշվարկվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[23] Թուրքմենստանի տվյալները բացակայում են:

2021 թ. բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքով և զբաղեցրած տեղով աշխարհում լավագույն երկիր է ճանաչվել Չինաստանը՝ 942314.82 արժեքով: 2021 թ. 2-րդ տեղում Հոնկոնգն է՝ 431628.78 արժեքով, իսկ 3-րդ տեղը զբաղեցրել է Գերմանիան՝ 209744.31 արժեքով, որը 2011–2015 թթ. զբաղեցրել է 2-րդ տեղը, իսկ 2017 թվականից սկսած՝ 3-րդ տեղը: Նկատենք, որ վերլուծության 4-ից 10-րդ տեղերը զբաղեցրել են հիմնականում մեծ յոթնյակի երկրները, այսինքն՝ այն պետությունները, որոնց բաժինը համաշխարհային ՀՆԱ-ի մեջ նկատելի է: Կարելի է ենթադրել, որ նշված երկրների խումբը առավելագույն ձևով է իրացնում երկրի բացարձակ և հարաբերական առավելությունների տեսությունը բարձր տեխնոլոգիաների արտահանման գործում, այսինքն՝ այս հանգամանքը միտված է համաշխարհային շուկայում յուրաքանչյուրի՝ իր դիրքերն ամրապնդելուն և ուժեղացնելուն[24]:

Աղյուսակ 4-ի տվյալներից երևում է, որ 2021 թ. նախկին Խորհրդային Միության երկրների շարքում բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքով և զբաղեցրած դիրքով առաջին տեղում Ռուսաստանն է՝ 10553.18, որը գլխավորել է աղյուսակը 2011 թ. ի վեր: 2021 թ. տվյալներով, 2-րդ տեղում Լիտվան է ՝ 3106.96 արժեքով, իսկ 2011 թ. տվյալներով այդ երկիրը եղել է 5-րդ տեղում՝ 1582.03: 3-րդ տեղում, 2021 թ. տվյալներով, Էստոնիան է՝ 2680.43, իսկ 2011 թ. զբաղեցրել է 3-րդ տեղը՝ 2547.55 արժեքով: Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի երկրների ցուցանիշներին, ապա առաջատարը Հայաստանն է՝ 37.56 արժեքով, այնուհետև Ադրբեջանը՝ 22.21, ապա Վրաստանը՝ 16.89: Հայաստանը 2011 թ., նախկին Խորհրդային Միության երկրների շարքում, նշված ցուցանիշով զբաղեցրել է 12-րդ տեղը, իսկ հաջորդող տարիներին մեր երկիրը բարելավել է իր դիրքը՝ 2021 թ. զբաղեցնելով 8-րդ տեղը:

2020 թ. տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանման ցուցանիշով (%-ով՝ ապրանքների արտահանման ընդհանուր ծավալում) և աշխարհի բոլոր երկրների շարքում զբաղեցրած տեղով լավագույն երկիր է ճանաչվել Հոնկոնգը՝ 57.95: Նկատենք, որ 2011-2021 թվականներին Հոնկոնգը զբաղեցրել է 1-ին տեղը: 2020 թ. 2-րդ տեղում Ֆիլիպիններն են՝ 49.01, ընդ որում՝ 2016 թվականին այս երկիրը զբաղեցրել է 6-րդ տեղը, իսկ մնացած տարիներին՝ 2-րդ տեղը: 2020 թ. 3-րդ տեղում Վիետնամն է՝ 38.76 տոկոսով, 2011 թ. նորարարության համաշխարհային համաթվի շարքում եղել է 18-րդը՝ 11.64, 2015 թ. զբաղեցրել է 5-րդ տեղը՝ 29.37, իսկ 2017 թվականից սկսած՝ 3-րդ տեղը[25]:

Ըստ աղյուսակ 5-ի տվյալների՝ 2020 թ. նախկին Խորհրդային Միության երկրների շարքում տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանման ցուցանիշով (%-ով՝ ապրանքների արտահանման ընդհանուր ծավալում) և զբաղեցրած տեղով առաջին տեղում Լատվիան է՝ 10.88, որը գլխավորել է աղյուսակը 2019 թ. ի վեր: Մինչ այդ, սկսած 2011 թ-ից, այդ երկիրը եղել է 2-րդ տեղում: 2020 թ. տվյալներով 2-րդ տեղում Էստոնիան է՝ 9.46, 2011–2018 թթ. տվյալներով այս երկիրն 1-ին տեղում էր: 3-րդ տեղում, 2020 թ. տվյալներով, Լիտվան է՝ 3.92, որը 2011–2020 թթ. զբաղեցրել է 3-րդ տեղը: Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի երկրների ցուցանիշներին, ապա առաջատարը Հայաստանն է ՝ 0.4, այնուհետև Վրաստանը՝ 0.36, ապա Ադրբեջանը՝ 0.14:

[24] Վերլուծությունը կատարվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[25] Վերլուծությունը կատարվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

Հայաստանը 2011 թ., նախկին Խորհրդային Միության երկրների շարքում, նշված ցուցանիշով զբաղեցրել է 5-րդ տեղը, իսկ 2020 թ.՝ 6-րդ տեղը:

Աղյուսակ 5

2020 թ. դրությամբ նախկին Խորհրդային Միության երկրների տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանումը, տոկոսը՝ ապրանքների արտահանման ընդհանուր ծավալում և զբաղեցրած տեղը 2011–2020 թթ.[26]

Երկիրը	2020	2019	2018	2017	2015	2011
	Տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանում (%-ը՝ ապրանքների արտահանման ընդհանուր ծավալում) - զբաղեցրած տեղը					
Լատվիա	10.88-1	8.94-1	8.44-2	9.23-2	11.36-2	5.39-2
Էստոնիա	9.46-2	7.59-2	8.51-1	9.28-1	11.91-1	11.47-1
Լիտվա	3.92-3	3.44-3	3.48-3	4.08-3	3.95-3	2.4-3
Բելառուս	1.02-4	0.81-5	0.75-5	0.7-5	0.52-7	0.38-7
Ուկրաինա	0.73-5	0.83-4	0.98-4	0.93-4	0.82-5	0.89-4
Հայաստան	0.4-6	0.28-8	0.32-8	0.19-9	0.15-10	0.73-5
Վրաստան	0.36-7	0.4-7	0.45-7	0.56-7	1.04-4	0.3-8
Ղրղզստան	0.27-8	0.18-10	0.14-10	0.15-10	0.07-11	0.24-9
Մոլդովա	0.21-9	0.26-9	0.23-9	0.28-8	0.26-8	0.56-6
Ուզբեկստան	0.16-10	0.12-12	0.11-12	0.11-12	տ. չ.	տ. չ.
Ադրբեջան	0.14-11	0.02-13	0.02-13	0.02-13	0.02-12	0-12
Ռուսաստան	տ. չ.	0.53-6	0.47-6	0.63-6	0.81-6	0.24-10
Ղազախստան	տ. չ.	0.12-11	0.11-11	0.13-11	0.19-9	0.14-11
Տաջիկստան27	-	-	-	-	-	-
Թուրքմենստան[28]	-	-	-	-	-	-

Աղյուսակներ 6-ում և 7-ում ներկայացրել ենք Հայաստանի Հանրապետության վերաբերյալ նորարարությունների զարգացման հիմնական ցուցանիշները, որոնց դիտարկումը վկայում է համաշխարհային մակարդակով բավականին համեստ ցուցանիշների մասին:

Աղյուսակ 6

Հայաստանի Հանրապետության նորարարությունների զարգացման հիմնական ցուցանիշները 1997–2022 թթ.[29]

Տարի	Նորարարության կայունության գործակիցը (0-100)	Հետազոտությունների և մշակումների ոլորտում ներդրումները՝ %-ով, ՀՆԱ-ի համեմատությամբ	Տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանումը՝ %-ով, ապրանքների արտահանման ընդհանուր ծավալում	Բարձր տեխնոլոգիաների արտադրանքի արտահանման արժեքը՝ մեկ ԱՄՆ դոլար մեկ բնակչի հաշվով	Բարձր տեխնոլոգիական արտահանման կիսամյակային ապրանքաշրջանառությունը՝ %
1997	տ. չ.	0.19	տ. չ.	տ. չ.	տ. չ.
1998	տ. չ.	0.23	տ. չ.	տ. չ.	տ. չ.
1999	տ. չ.	0.21	տ. չ.	տ. չ.	տ. չ.
2000	տ. չ.	0.19	0.36	տ. չ.	տ. չ.
2001	տ. չ.	0.28	2.02	տ. չ.	տ. չ.
2002	տ. չ.	0.25	0.76	տ. չ.	տ. չ.

[26] Կազմվել և հաշվարկվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[27] Տաջիկստանի տվյալները բացակայում են:
[28] Թուրքմենստանի տվյալները բացակայում են:
[29] Կազմվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

2003	տ. չ.	0.32	0.3	տ. չ.	տ. չ.
2004	տ. չ.	0.26	0.46	տ. չ.	տ. չ.
2005	տ. չ.	0.26	0.29	տ. չ.	տ. չ.
2006	տ. չ.	0.24	0.3	տ. չ.	տ. չ.
2007	տ. չ.	0.21	1.22	5.2	1.14
2008	տ. չ.	0.22	0.9	7.25	1.57
2009	տ. չ.	0.29	1.05	5.13	2.84
2010	տ. չ.	0.24	0.75	4.73	2.32
2011	33	0.27	0.73	7.45	3.37
2012	34.5	0.24	1.26	7.58	2.85
2013	37.6	0.22	0.16	9.33	3.03
2014	36.1	0.24	0.26	9.31	3.02
2015	37.3	0.25	0.15	11.86	5.65
2016	35.1	0.23	0.18	21.85	6.14
2017	35.7	0.23	0.19	28.24	7.55
2018	32.8	0.19	0.32	36.29	7.06
2019	34	0.18	0.28	45.57	9.79
2020	32.6	0.21	0.4	26.51	7.14
2021	31.4	տ. չ.	տ. չ.	37.56	5.96
2022	26.6	տ. չ.	տ. չ.	տ. չ.	տ. չ.

Աղյուսակ 7

Հայաստանի Հանրապետության նորարարությունների զարգացման հիմնական ցուցանիշները համաշխարհային ցուցանիշների համապատասխանում 2011-2021 թթ.[30]

Տարի	Լոգոստատիստիկ համաթվի արժեքը (0-100)	Հետազոտության և մշակման ծախսերը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանման վերաբերյալ տվյալները, %-ով՝ արտահանման ընդհանուր ծավալում	Բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքը	Բարձր տեխնոլոգիաների արտահանման ավելացած արժեքի նկատմամբ, %-ով՝ մշակող արդյունաբերության	Տվյալ տարում եկամուտների ցածրակարգ ոլորտի տեղեկատվության քանակը
2011	33-69	0.27-64	0.73-69	7.45-91	3.37-91	167
2012	34.5-69	0.24-64	1.26-63	7.58-110	2.85-99	170
2013	37.6-57	0.22-75	0.16-108	9.33-110	3.03-100	168
2014	36.1-65	0.24-67	0.26-102	9.31-111	3.02-101	168
2015	37.3-61	0.25-74	0.15-118	11.86-110	5.65-82	171
2016	35.1-60	0.23-67	0.18-111	21.85-97	6.14-82	172
2017	35.7-59	0.23-72	0.19-108	28.24-101	7.55-72	167
2018	32.8-66	0.19-71	0.32-92	36.29-94	7.06-67	169
2019	34-63	0.18-74	0.28-87	45.57-89	9.79-57	159
2020	32.6-61	0.21-57	0.4-64	26.51-91	7.14-66	155
2021	31.4-69	տ. չ.	տ. չ.	37.56-69	5.96-58	145

Եզրակացություններ:

– Հատկապես վերջին տարիներին ՀՀ-ում զգալի աշխատանք է կատարվել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում իրերի

[30] Կազմվել է www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

վիճակը փոփոխելու և բարելավելու նպատակով: Ընդունվել են առանձին իրավական ակտեր, որոնց միջոցով փորձ է արվում բարձրացնելու գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության մակարդակը: Սակայն իրականացվող միջոցառումները համակարգված և համալիր բնույթ չունեն և առավելապես ծառայում են ոլորտում առաջացող տեղային խնդիրների մասնակի լուծմանը: Ավելին, գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնական բնութագրիչները մշակվում են՝ հաշվի չառնելով համաշխարհային զարգացումները և օրինաչափությունները, ինչը նկատելիորեն թուլացնում է ոլորտում իրականացվող քաղաքականության, այդ թվում՝ տնտեսական գործիքակազմին վերաբերող միջոցառումները:

- «Հետազոտություն-մշակում» ծախսերի վերաբերյալ աշխարհի լավագույն տասնյակը կազմող երկրների տվյալների վերլուծությունը վկայում է, որ առաջնային տեղերը զբաղեցնում են ոչ թե գերտերությունները և խոշոր պետությունները, այլ փոքր, սակայն արդյունավետ տնտեսություն ունեցող երկրները: Ասվածը լավագույն հնարավորություն է ստեղծում հատկապես փոքր պետությունների, այդ թվում՝ ՀՀ-ի համար՝ նկատելիորեն ավելացնելու հետազոտությունների և մշակումների նպատակով կատարվող ծախսերը՝ ապահովելով ներդրված միջոցների արդյունավետ կառավարումը:
- Նախկին Խորհրդային Միության հանրապետությունների շարքում «հետազոտություն-մշակում» ծախսերով 2011-2021 թթ. Հայաստանը գրանցել է հետևյալ արդյունքները. 2012-ին զբաղեցրել է 8-րդ տեղը, հաջորդող տարիներին դիրքային անկում է արձանագրվել. 2020 թ. 0.21% ցուցանիշով զբաղեցրել է 10-րդ տեղը:
- Հարավային Կովկասի երկրների ցուցանիշների վերլուծությունը, ըստ նորարարության համաթվի և զբաղեցրած տեղի, ցույց է տալիս, որ առաջատարը Վրաստանն է՝ 27.9 արժեքով, այնուհետև Հայաստանը՝ 26.6, ապա Ադրբեջանը՝ 21.4: Հայաստանը 2012 թ. նախկին Խորհրդային Միության երկրների շարքում նշված ցուցանիշով զբաղեցրել է 7-րդ տեղը, իսկ հաջորդ տարիներին վատթարացրել է իր դիրքը՝ 2022 թ. զբաղեցնելով 9-րդ տեղը:
- Ուսումնասիրելով բարձր տեխնոլոգիաների արտահանման արժեքով և զբաղեցրած տեղով Հարավային Կովկասի երկրների ցուցանիշները՝ եզրահանգում ենք, որ առաջատարը Հայաստանն է՝ 37.56 արժեքով, այնուհետև Ադրբեջանը՝ 22.21, ապա Վրաստանը՝ 16.89: Հայաստանը, նշված ցուցանիշով, 2011 թ. նախկին Խորհրդային Միության երկրների շարքում զբաղեցրել է 12-րդ տեղը, իսկ հաջորդ տարիներին բարելավել է իր դիրքը՝ 2021 թ. զբաղեցնելով 8-րդ տեղը:
- Ուսումնասիրելով 2020 թ. դրությամբ Հարավային Կովկասի երկրների տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանման ցուցանիշները՝ ակնհայտ է դառնում, որ առաջատարը Հայաստանն է՝ 0.4 տոկոսով, այնուհետև Վրաստանը՝ 0.36, ապա Ադրբեջանը՝ 0.14: Սակայն Հայաստանը 2011 թ., նախկին Խորհրդային Միության երկրների շարքում, նշված ցուցանիշով զբաղեցրել է 5-րդ տեղը, իսկ 2020 թ.՝ 6-րդ տեղը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ., Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՃՇՊՀ, 2011:
2. Սուվարյան Յու. Մ., Հարությունյան Վ. Լ., Սարգսյան Վ. Ա., Խաչատրյան Վ. Վ., Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013:
3. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2000 թ. դեկտեմբերի 5-ին:
4. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2011 թ. ապրիլի 14-ին:
5. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին:
6. ՀՀ Կառավարության 2023 թ. մարտի 30-ի նիստի հեռարձակումը https://www.youtube.com/watch?v=ujX51fL4J9s հղմամբ:
7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 747-Լ որոշումը:
8. Воронов Н.А., Исследование терминологически-классификационного аспекта информационной деятельности, Вестник ННГУ, №1, 2005.
9. Шумпетер Й.А., Теория экономического развития. Капитализм, социализм и демократия, перевод с немецкого, М., «Эксмо», 2008.
10. Яголковский С.Р., Психология инноваций, Издательский дом Высшей школы экономики, М., 2011.
11. Godin B., Innovation: The History of a Category, Project on the Intellectual History of Innovation, Working Paper No. 1, Montréal, 2008.
12. Trott P., Innovation management and new product development,6th edition Edinburgh, 2017.
13. White Margarett A., Bruton Garry D., The management of technology and innovation, 2007.
14. https://psyforums.ru/hy/vnedrenie-fgos/ponyatie-anomiya-bylo-vvedeno-v-nauchnyi-oborot-vnimanie---eto.html
15. www.theglobaleconomy.com

АШОТ МАРКОСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд» АГЭУ, доктор экономических наук, профессор

ЭЛЯНОРА МАТЕВОСЯН
Ассистент кафедры инновационной экономики ЕГУ, кандидат экономических наук, доцент

МЕРУЖАН МАРКОСЯН
Член общественной организации «Политологических, юридических и экономических исследований и прогнозирований», кандидат экономических наук

Армения в контексте современной инновационной деятельности.– В условиях современного мирового хозяйства роль и значение национальных экономик, отдельных стран, а также экономических союзов характеризуется системой многих показателей, среди которых особое место занимают показатели инноваций и инновационной деятельности. Для этого были исследованы и выявлены точки зрения и подходы различных авторов относительно инноваций, выявлено содержание и значение инноваций в укреплении государства и повышении темпов экономического роста. Изучая глобальные и региональные показатели и разработки в указанной сфере, авторы провели соответствующий анализ и пришли к ряду выводов, которые могут быть полезны для разработки и реализации эффективной политики научной и научно-технической деятельности в Республике Армении, что внесет большой вклад в повышение конкурентоспособности этого вида деятельности, как на мировом рынке, так и в региональном развитии. По мнению авторов, хотя в РА была проделана значительная работа по изменению и улучшению положения дел в области научной и научно-технической деятельности. Приняты отдельные правовые акты, посредством которых делается попытка повысить эффективность научной и научно-технической деятельности. Однако реализуемые мероприятия не носят системного и комплексного характера и служат скорее частичному решению локальных проблем, возникающих на местах.

Ключевые слова: *Инновационная деятельность, экономика, научная и научно-техническая деятельность, затраты на исследования и разработки, инновационный индекс, высокотехнологичный экспорт*
JEL: O32, O38
DOI: 10.52174/29538114_2023.1-65

ASHOT MARKOSYAN
Senior Expert at «Amberd» Research Center ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

ELYANORA MATEVOSYAN
Associate Professor of the Chair of Innovative Economics of YSU,
PhD of Sciences (Economics), Associate Professor

MERUZHAN MARKOSYAN
«Political, Legal and Economic Research and Forecasting» NGO,
PhD in Economics

Armenia in the Context of Modern Innovative Activities.– In the current global economy, the role and importance of national economies of individual countries, as well as the economic unions of countries, are characterized based on various indicators, with a special emphasis on innovations and innovative activities. For this purpose, the viewpoints and approaches presented by various authors regarding innovations were researched and identified, the content and importance of innovations in strengthening the state and increasing the rate of economic growth were revealed. By researching the global and regional indicators and developments of the mentioned field, the authors made appropriate analyses and came to a number of conclusions that can be useful for the development and implementation of an effective policy of scientific and scientific-technical activities in the Republic of Armenia, which will greatly contribute to increasing the competitiveness of that type of activity, both in the global market and in regional development. The authors acknowledge that considerable work has been done in the RA to change and improve the state of affairs in the field of scientific and scientific-technological activities. Several legislative acts have been adopted, aiming to enhance the efficiency of these activities. However, the implemented measures lack a systematic and complex nature and serve rather to partially solve local problems arising in the field.

Keywords: *Innovative activity, economy, scientific and scientific-technical activity, research and development expenses, innovation index, high-tech export*
JEL: O32, O38
DOI: 10.52174/29538114_2023.1-65